ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոռ Քոչարյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Մակատի (Ֆիլիպինների Հանրապետություն), 2024թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը

3. Հրավիրող կողմը

Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Ասիական Զարգացման Բանկի կողմից կազմակերպված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տարածաշրջանային ֆորումին:

5. Քննարկված թեմաները

- Հայաստանի Հանրապետությունում իրականացված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման արդյունքների քննարկում,
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման փորձը Կորեայում և Կամբոջայում,
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի 2024-2028թթ ռազմավարությունը, բնական ռեսուրսների հաշվառման ստանդարտի նախագծի քննարկում,
- Կայուն զարգացման հաշվետվողականության զարգացումը և մարտահրավերները, դրա դերը և կարևորությունը հանրային հատվածում,

- Կայուն զարգացման հաշվետվողականության ստանդարտների ներդրումը հանրային հատվածում, կլիմայի փոփոխությունների հետ կապված բացահայտումների ծրագիրը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում իրականացված և Վրաստանի Հանրապետությունում իրականացվող հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի գնահատման ընթացքը և արդյունքները, ներկայացվել է Կորեայում և Կամբոջայում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման փորձը: Ներկայացվել է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի 2024-2028թթ ռազմավարությունը և առաջիկա անելիքները, մասնավորապես, հանրային հատվածում կայուն զարգացման հաշվետվողականության ստանդարտների ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքները և մշակվող նախագծերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հոկտեմբերի 8, 2024թ.